

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

**ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի**

ք.Երևան

05 փետրվարի 2018թ.

Ներկային՝ գիտխորհրդի 24 անդամներից 17-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը (Ձեկուցող՝ Ա. Սադյան):
2. Տեղեկատվություն ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից անցկացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի մասին (Ձեկուցող՝ Ա. Սադյան):
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Լսեցին՝ Խորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա.Ս. Սադյանին, ով տեղեկացրեց, որ անհրաժեշտ է շարունակել Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին Նազելի Չարչյանի և Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակների տրամադրումը: Նա ներկա գտնվողներին տեղեկացրեց, որ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ ներկայումս տրամադրվում է «Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Պարզևի Մինասյանին, ով ունի բարձր առաջադիմություն, ցուցաբերում է գիտական և հասարակական

ակտիվություն, իսկ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակ՝ «Դեղագիտություն» մասնագիտությամբ բակալավրի երրորդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Հայկի Բաղդասարյանին: Ա. Սադյանը հավելեց, որ Մարգարիտա Հայկի Բաղդասարյանը մասնակցում է նաև լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին: Նա շեշտեց, որ ԵՊՀ պետական և ավարտական կրթաթոշակներ հատկացնելու կարգի համաձայն, թեկնածու ուսանողները վերջին 4 կիսամյակում պետք է ունենան անընդմեջ գերազանց առաջադիմություն, հասարակական ակտիվություն, լինեն սոցիալապես անապահով ընտանիքից: Ա. Սադյանն առաջարկեց հաշվի առնելով վերոնշյալը՝ շարունակել այդ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրումը:

Ելույթ ունեցան՝ ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանը, կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը ովքեր փաստեցին, որ նշված ուսանողուհիները ուսումնառության այս ժամանակահատվածում ևս շարունակել են ցուցաբերել գերազանց առաջադիմություն, ակտիվորեն մասնակցել են տարբեր ուսանողական միջոցառումների: Նրանք առաջարկեցին գիտխորհրդի անդամներին ևս կողմ քվեարկել Մ. Մինասյանին և Մ. Բաղդասարյանին անվանական կրթաթոշակների տրամադրումը շարունակելու համար:

Որոշեցին՝ (միաձայն) շարունակել.

1. «Ֆարմացիա» մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Պարզևի Մինասյանի՝ Նազելի Զարչյանի անվան կրթաթոշակը:
2. «Դեղագիտություն» 3-րդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Հայկի Բաղդասարյանի՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակը:

- 2 Տեղեկատվություն ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի անցկացման մասին (Զեկուցող՝ Ա. Սադյան):

Լսեցին՝ Խորհրդի նախագահ Ա. Սադյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Հայաստանի հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, համաձայն ՀՀ ԿԳՆ

նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 1514-Ա/2 հրամանի, անց է կացնում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթ: Նա նշեց, որ մրցույթն անց է կացվում պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում՝ գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով: Համաձայն մրցույթի պայմանների՝ գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրվեն «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ», «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառների գիտահետազոտական խմբերի կողմից ներկայացված և մրցութային կարգով ընտրված թեմաներին: Ա. Սաղյանը շեշտեց, որ Ֆարմացիայի ինստիտուտը, հանդիսանալով և՛ ուսումնական և՛ գիտական գործառույթներով կառույց, պետք է ակտիվորեն մասնակցի այդ մրցույթին, որը հնարավորություն կտա ինստիտուտի դասախոսական կազմին, երիտասարդ գիտաշխատողներին զբաղվելու ինչպես ուսումնական, այնպես էլ գիտահետազոտական գործունեությամբ: Նա ամփոփում էր վարիչներին հորդորեց լինել հետևողական և յուրաքանչյուր ամփոփից ներկայացնել որոշակի թվով հայտեր՝ մրցույթին մասնակցելու համար:

Որոշեցին՝ Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստի ընթացքում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան